Հաստատված է՝
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2025 թվականի հոկտեմբերի 17-ի նիստում:
Արձանագրություն № 01-10/25
Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր՝
Մ.Գ.Բարսեղյան

ԿԱՐԳ

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՏՆՕՐԵՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգով կարգավորվում են «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան) ավագ դպրոցի (այսուհետ՝ դպրոց) տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, տնօրենի նշանակման հետ կապված հարաբերությունները:

1.2. Դպրոցի տնօրենի ընտրությունը կատարվում է մրցույթով: Մրցույթը կազմակերպում է համալսարանի գիտական խորհուրդը (այսուհետ՝ գիտական խորհուրդ)՝ դպրոցի տնօրենը ընտրվում է խորհրդի նիստում, փակ գաղտնի քվեարկությամբ:

1.3. Սույն կարգը մշակված է «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեվավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման և համալսարանի կանոնադրության հիման վրա:

1.4. Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի կազմակերպման հետ կապված ծախսերը կատարվում են համալսարանի սեփական միջոցների հաշվին:

2. Հիմնական պայմանները

2.1 Դպրոցի տնօրենի պաշտոնավարման պայմանագրի ժամկետը լրանալու, անձնական դիմումի հիման վրա կամ համալսարանի ռեկտորի համապատասխան իրավական ակտով պաշտոնից ազատման, մահվան, դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական (վարչական կամ մանկավարժական պաշտոն զբաղեցնելու սահմանափակման, ազատազրկման) դատավճռի առկայության դեպքերում, ինչպես նաև սույն կարգի 3.5-րդ կետով սահմանված դեպքում համալսարանի ռեկտորը՝ ըստ ենթակայության, թափուր տեղ առաջանալուց հետո՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, նշանակում է դպրոցի տնօրենի պարտականությունները կատարող կամ ժամանակավոր պաշտոնակատար:

2.2 Դպրոցի տնօրենը, որի լիազորությունների դադարեցման արդյունքում առաջացել է տնօրենի պաշտոնի թափուր տեղ, չի կարող նշանակվել նույն հաստատության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար կամ տնօրենի պարտականությունները կատարող: Դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար կամ տնօրենի պարտականությունները կատարող կարող է նշանակվել դպրոցի խորհրդի անդամ չհանդիսացող՝

ա) տնօրենի տեղակալը.

բ) Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն անձը, որն ունի կրթության ոլորտի բարձրագույն կրթություն և վերջին 10 (տաս) տարվա ընթացքում գիտամանկավարժական կամ մանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

2.3 Դպրոցի տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն անձը, որը՝

ա) չունի «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 25-րդ և 27-րդ մասերով նշված սահմանափակումներ.

բ) ունի հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր).

գ) մասնակցել է սույն կարգի 3.8-րդ կետով ենթակետով սահմանված հանդիպումներին:

2.4. Դպրոցի տնօրենը ընտրվում է մրցույթով՝ գիտական խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 (հինգ) տարի ժամկետով:

2.5 Սույն կարգի 3.8-րդ կետով սահմանված հանդիպումներից որևէ մեկին չմասնակցելու դեպքում հավակնորդը չի կարող մասնակցել մրցույթին:

3. Դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու ընթացակարգը

3.1 Գիտական խորհուրդը տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից հաշված, առավելագույնը 45 (քառասունհինգ) աշխատանքային օր առաջ, բայց ոչ պակաս, քան 40 (քառասուն) աշխատանքային օր առաջ հայտարարում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

3.2 Սույն կարգի 2.1-րդ կետով սահմանված դեպքերում (բացառությամբ տնօրենի պաշտոնավարման պայմանագրի ժամկետը լրանալու դեպքի) գիտական խորհուրդը տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու օրվանից՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, հայտարարում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

3.3 Գիտական խորհուրդը հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը՝ համաձայն Հավելված 1-ի, ներկայացնում է հրապարակման՝

ա) www.azdarar.am կայքում.

բ) համալսարանի www.nuaca.am կայքում՝ հայտարարություններ բաժնում:

3.4 Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունում է համալսարանի ընդհանուր բաժինը՝ 3.3 կետում նշված կայքերում հայտարարության հրապարակման օրվանից սկսած 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.5 Մասնակցության հայտերի բացակայության դեպքում գիտական խորհուրդը հայտերի ընդունման վերջին օրվանից հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, հայտարարում է նոր մրցույթ՝ սույն կարգի պահանջների համաձայն:

3.6 Մրցույթի արդյունքում տնօրեն չընտրվելու դեպքում գիտական խորհուրդը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում հայտարարում է նոր մրցույթ՝ սույն կարգի պահանջներին համապատասխան:

3.7 Հավակնորդը մրցույթին մասնակցելու հայտ ներկայացնելու օրվանից գրավոր դիմում է (Հավելված 7) համալսարանի ռեկտորին՝ ավագ դպրոցի գործունեության վերաբերյալ իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրելու և մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ առանձին հանդիպումներ կազմակերպելու համար:

3.8 Դպրոցի տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը կամ պարտականությունները կատարողը) (այսուհետ՝ տնօրեն) պարտավոր է՝

ա) համալսարանի ռեկտորի համապատասխան հանձնարարությունը ստանալուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ապահովել սույն կարգի 3.7-րդ կետով

սահմանված հավակնորդի առանձին հանդիպումները դպրոցի մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ՝ զարգացման ծրագիրը կազմելու համար առաջարկություններ լսելու նպատակով.

բ) համալսարանի ռեկտորի հանձնարարությունը ստանալուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, հավակնորդին տրամադրել գրավոր տեղեկատվություն դպրոցի գործունեության վերաբերյալ (տվյալներ մանկավարժական, աշակերտական համակազմի, ուսումնադաստիարակչական, արտադպրոցական գործունեության, կառավարման և խորհրդակցական մարմինների մասին, ինչպես նաև դպրոցի գործունեության վերաբերյալ հավակնորդի կողմից պահանջվող անհրաժեշտ տեղեկատվություն)՝ պահպանելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջները.

գ) սույն կարգի 3.8-րդ կետի ա) ենթակետով սահմանված հանդիպումներից հետո արձանագրությունները 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել հավակնորդին:

4. Բաց մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերը, դրանց ներկայացման և ընդունման ընթացակարգը

4.1 Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը պետք է ներկայացնի՝

ա) դիմում՝ գիտական խորհրդի նախագահի անունով՝ համաձայն Հավելված 2-ի.

բ) անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի տեսաներածված տարբերակը (բնօրինակի հետ).

գ) հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) բնօրինակի տեսաներածված տարբերակը (բնօրինակի հետ).

դ) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրամանով հաստատված ձևաչափին համապատասխան դպրոցի զարգացման իր ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև հայտերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով).

ե) սույն կարգի 3.8-րդ կետով սահմանված հանդիպումների արձանագրությունները, որոնք հավակնորդը կարող է ներկայացնել մինչև հայտերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով.

զ) ինքնակենսագրություն՝ համաձայն Հավելված 3 -ի.

է) անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի տեսաներածված տարբերակը.

ը) 3x4 չափի լուսանկար:

4.2 Համալսարանի ընդհանուր բաժինը փաստաթղթերի բնօրինակի տեսաներածված տարբերակները համեմատում է բնօրինակների հետ, բնօրինակները վերադարձնում է հավակնորդին: Փաստաթղթերն ամբողջական չլինելու կամ կարգի պահանջներին չհամապատասխանելու դեպքում հավակնորդը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում հնարավորություն է ունենում թերությունները շտկելու:

4.3 Հավակնորդը կարող է փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին: Էլեկտրոնային եղանակով փաստաթղթերը ներկայացնելու դեպքում բնօրինակները ներկայացվում են մրցույթի անցկացման օրը: Ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանության դեպքում հավակնորդը չի մասնակցում մրցույթին:

4.4. Հավակնորդների՝ սույն կարգով պահանջվող փաստաթղթերն ընդունելու նպատակով համալսարանում բացվում է փաստաթղթերի ընդունման գրանցամատյան՝ էջերի համարակալմամբ, կարված և կնքված:

4.5. Գրանցամատյանի վարման և փաստաթղթերի ընդունման պատասխանատու է համարվում համալսարանի ընդհանուր բաժինը կամ գիտական խորհրդի նախագահի կողմից լիազորված այլ անձ կամ ստորաբաժանում:

4.6. Մրցույթի անցկացման օրը նշանակվում է սույն կարգի 3.4 կետում նշված ժամկետը ավարտվելուց հետո 10 (տաս) օրվա ընթացքում, որը նշվում է հրապարակվող հայտարարության մեջ (Հավելված 1):

4.7 Սույն կարգի 3.4 կետում նշված գործընթացը ավարտելուց հետո կազմվում է հանձման-ընդունման արձանագրություն (երկու օրինակից), որը ստորագրվում է համալսարանի գիտական խորհրդի քարտուղարի և 4.5 կետում նշված պատասխանատուի կողմից և ստացված փաթեթները հանձնվում է գիտական խորհրդի քարտուղարին:

5. Մրցույթի անցկացման ընթացակարգը

5.1. Տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի նիստը գիտական խորհուրդը գումարում է հրապարակված հայտարարությունում նշված օրը:

5.2. Համալսարանի գիտական խորհրդի գումարած նիստը համարվում է իրավազոր՝ գիտական խորհրդի անդամների առնվազն 2/3-ի (երկու երրորդ) մասնակցության դեպքում:

5.3. Գիտական խորհրդի նիստը բացում է գիտական խորհրդի նախագահը և քննարկման է ներկայացնում նիստի օրակարգի նախագիծը: Օրակարգի նախագիծը և հաստատման

առաջարկվող բոլոր հարցերը քննարկվում և հաստատվում են նիստին ներկա գիտական խորհրդի անդամների քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

5.4. Նիստի օրակարգը հետևյալն է.

ա) հավակնորդների՝ սույն կարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում,

բ) թեկնածուների ցանկի հաստատում,

գ) թեկնածուների կողմից զարգացման ծրագրերի ներկայացում,

դ) գիտական խորհրդի անդամների կողմից հարցերի ուղղում թեկնածուներին,

ե) քննարկումներ և խորհրդի անդամների ելույթներ,

զ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,

է) տնօրեն ընտրելու նպատակով գաղտնի քվեարկության իրականացում,

ը) տնօրենի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

5.5. Գիտական խորհրդի նիստի օրակարգի հաստատումից առաջ, խորհրդի անդամների առաջարկությամբ օրակարգում կարող են ավելացվել նաև այլ հարցեր:

5.6. Նիստի օրակարգի հաստատումից հետո, գիտական խորհրդի նախագահը պարզաբանում է մրցույթի անցկացման ընթացակարգը:

5.7. Գիտական խորհրդի նիստին տնօրենի պաշտոնի հավակնորդի ներկայությունը պարտադիր է, սակայն նրա բացակայությունը հիմք չէ նրա թեկնածությունը քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար՝ բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի:

5.8. Օրակարգի առաջին հարց. գիտական խորհրդի քարտուղարը այբբենական կարգով զեկուցում է հավակնորդների՝ սույն կարգի պահանջներին բավարարելու հարցը: Այնուհետև զեկուցողը պատասխանում է առաջացած հարցերին: Խորհրդի ցանկացած անդամ կարող է առաջարկ ներկայացնել հավակնորդին թեկնածուների ցուցակից հանելու վերաբերյալ՝ հիմնավորելով, թե սույն կարգի որ պահանջներն են խախտված: Հավակնորդին ցուցակից հանելու առաջարկը գիտական խորհրդի նախագահի կողմից դրվում է քվեարկության: Հավակնորդը հանվում է ցուցակից, եթե առաջարկին կողմ է քվեարկել նիստին ներկա անդամների առնվազն 2/3-ը (երկու երրորդ):

5.9. Օրակարգի երկրորդ հարց. գիտական խորհրդի նախագահի կողմից դրվում է քվեարկության թեկնածուների ցուցակը հաստատելու առաջարկը:

5.10. Օրակարգի երրորդ հարց. գիտական խորհրդի նախագահը առաջնորդվում է սույն կարգի 5.12 կետով, ըստ ազգանունների այբբենական կարգի, ձայնը տալիս է թեկնածուներին՝ զարգացման ծրագրերի ներկայացման համար:

5.11. Օրակարգի չորրորդ հարց. յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո խորհրդի նախագահը հայտարարում է հարցերի հերթագրում, որից հետո խորհրդի հերթագրված անդամները, ըստ հերթագրման հերթականության, ստանում են թեկնածուին հարց տալու հնարավորություն: Թեկնածուին տրվող հարցերը կարող են վերաբերվել միայն նրա կողմից ներկայացված փաստաթղթերին և ծրագրային ելույթին:

5.12. Յուրաքանչյուր թեկնածուի ներկայացման և քննարկման համար որպես կանոն սահմանվում է հետևյալ աշխատակարգը՝

ա) թեկնածուին ներկայացման և խոսք տալու համար մինչև 3 րոպե,

բ) թեկնածուի կողմից զարգացման ծրագիրը ներկայացնելու համար մինչև 20 րոպե,

գ) յուրաքանչյուր հարցի համար մինչև 2 րոպե,

դ) յուրաքանչյուր պատասխանի համար մինչև 5 րոպե,

ե) յուրաքանչյուր ելույթի համար մինչև 3 րոպե:

5.13. Օրակարգի հինգերորդ հարց. բոլոր թեկնածուներին ուղղված հարցերի և նրանց պատասխանների ավարտից հետո սկսվում է քննարկում: Խորհրդի անդամների ելույթները կարող են դադարեցվել խորհրդի որոշմամբ: Ելույթ ունեցող խորհրդի անդամներին հարցեր չեն տրվում:

5.14. Քննարկման ավարտից հետո թեկնածուներին կարող են տրվել լրացուցիչ ելույթի հնարավորություն:

5.15. Քննարկումներից հետո գիտական խորհրդի նախագահը, ըստ ազգանունների այբբենական կարգի, հրապարակում է թեկնածուների ազգանուն-անունները: Եթե վերջիններս իրենց անունը հրապարակելու պահին ինքնաբացարկ չեն հայտնում, ապա նրանց թեկնածությունը ներառվում է քվեաթերթիկում:

5.16. Քննարկումն ավարտվում է խորհրդի նախագահի եզրափակիչ ելույթով:

5.17. Օրակարգի վեցերորդ հարց. գաղտնի քվեարկություն կազմակերպելու, ձայները հաշվելու համար գիտական խորհրդի անդամներից ընտրվում է հաշվիչ հանձնաժողով՝ առնվազն 3 անձից բաղկացած կազմով:

5.18. Հաշվիչ հանձնաժողովը՝

ա) իր կազմից ընտրում է նախագահ,

բ) կազմակերպում և անցկացնում է քվեարկությունը,

գ) կազմում է տնօրենի ընտրության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը (երկու օրինակից),

դ) հրապարակում է տնօրենի ընտրության քվեարկության արդյունքները:

5.19. Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ու արձանագրությունները ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի նախագահը և բոլոր անդամները:

5.20. Գաղտնի քվեարկության համար պատրաստվում են քվեաթերթիկներ:

5.21. Քվեաթերթիկում նշվում է լրացման կարգը, քվեաթերթիկի ձախ կողմում թեկնածուների հերթական համարում այբբենական կարգով նշվում է ազգանունը, անունը, հայրանունը, իսկ քվեաթերթիկի աջ կողմում յուրաքանչյուր թեկնածուի ազգանվան դիմաց նշվում է «կողմ եմ» բառը և տեղադրվում է առանց նշումի վանդակ: Քվեաթերթիկի ձևը ներկայացված է սույն կարգի Հավելված 5-ում: Մեկ հավակնորդի առկայության դեպքում քվեաթերթիկում նշվում են «կողմ եմ» և «դեմ եմ» բառերը, դրանց դիմաց տեղադրվում է առանց նշումի վանդակ: Քվեաթերթիկի ձևը ներկայացված է սույն կարգի Հավելված 4-ում:

5.22. Գիտական խորհրդի քարտուղարը թեկնածուների գաղտնի քվեարկության քվեաթերթիկները, քվեաթերթիկների գրանցման ցուցակները, գիտական խորհրդի անդամների ցուցակը և քվեարկության արդյունքների գրանցման արձանագրությունների ձևաթուղթը (Հավելված 6) հանձնում է հաշվիչ հանձնաժողովի նախագահին:

5.23. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում է քվեարկությունը՝ ապահովում է քվեարկության համար անհրաժեշտ պայմաններ, ընտրողների (գիտական խորհրդի անդամների ընտրության իրավունք ունեցող ցուցակային կազմ) ազատ ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը:

5.24. Քվեաթերթիկների գրանցման ցուցակները վարելու, քվեաթերթիկները բաժանելու և քվեատուփը հսկելու համար, հաշվիչ հանձնաժողովի նախագահը կատարում է աշխատանքի բաժանում՝ հանձնաժողովի անդամների միջև:

5.25. Գիտական խորհրդի որոշմամբ նիստերը կարող են ընդմիջվել:

5.26. Գիտական խորհրդի նիստը շարունակվում է մինչև քվեարկության ավարտը և ընտրության արդյունքների մասին որոշման կայացումը:

6. Քվեարկության անկացման ընթացակարգը

6.1. Գիտական խորհրդի նախագահը ներկայացնում է գաղտնի քվեարկության ընթացակարգը:

6.2. Գաղտնի քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեն համալսարանի գիտական խորհրդի նիստին մասնակցող բոլոր անդամները (բացառությամբ սույն կարգի 6.7 կետում նշված դեպքերի)՝ հավասար իրավունքով:

6.3. Գաղտնի քվեարկությունը կազմակերպվում է քվեարկության համար առանձնացված սենյակում կամ առանձին խցիկում:

6.4. Բոլոր քվեաթերթիկները ստորագրվում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից՝ քվեաթերթիկի հետևի մասում:

6.5. Քվեաթերթիկները քվեարկողներին հանձնում է հաշվիչ հանձնաժողովի անդամը: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է ցուցակում՝ իր ազգանվան-անվան դիմաց: Քվեաթերթիկները բաժանելուց հետո չհանձնված քվեաթերթիկները տեղադրվում է առանձին ծրարի մեջ և վավերացվում հաշվիչ հանձնաժողովի նախագահի և անդամների ստորագրությամբ:

6.6. Գիտական խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

6.7. Եթե գիտական խորհրդի նիստում քննարկվում է գիտական խորհրդի որևէ անդամի (որպես թեկնածու) կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) վերաբերյալ հարց, ապա գիտական խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

6.8. Քվեաթերթիկը ստանալուց հետո խորհրդի անդամն անցնում է քվեարկության սենյակ կամ քվեարկության խցիկ՝ ինքնուրույն, գաղտնի լրացնում է քվեաթերթիկը: Քվեարկողը քվեաթերթիկի իր նախընտրած թեկնածուի օգտին քվեարկելու դեպքում, այդ թեկնածուի ազգանվան դիմաց «կողմ եմ» բառի դիմաց առկա առանց նշումի վանդակում նշում է V-աձև նշանը: Քվեաթերթիկում այլ նշումներ չեն կատարվում:

6.9. Մեկ թեկնածուի դեպքում կողմ քվեարկելիս քվեարկողը «կողմ եմ» բառի դիմաց առկա առանց նշումի վանդակում նշում է V-աձև նշանը, իսկ դեմ քվեարկելիս V-աձև նշանը նշում է «դեմ եմ» բառի դիմաց՝ առկա առանց նշումի վանդակում:

6.10. Քվեարկողը քվեաթերթիկում քվեարկության մասին նշում կատարելուց հետո՝ քվեարկության սենյակում կամ քվեարկության խցիկում ծալում է քվեաթերթիկը և գցում նախօրոք ստուգված և կնքված քվեատուփի մեջ:

6.11. Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամների ներկայությամբ առանձին սենյակում բացում է քվեատուփը, քվեատուփից հանում մեկական քվեաթերթիկ, հայտարարում և գրանցում է քվեարկության արդյունքը, փոխանցում հանձնաժողովի անդամներին՝ տեսակավորելու համար: Հանձնաժողովի յուրաքանչյուր

անդամ մինչև քվեատուփից հաջորդ քվեաթերթիկը հանելը կարող է պահանջել քվեարկության դնել քվեաթերթիկի անվավեր լինելու հարցը:

6.12. Քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե չի համապատասխանում սույն կարգի 6.8-6.9 կետերի պահանջներին կամ պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում կամ առկա են չնախատեսված նշումներ, ընդգծումներ, գրառումներ: Քվեաթերթիկի անվավերության վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի որոշումը ընդունվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

6.13. Քվեատուփում առկա բոլոր քվեաթերթիկները տեսակավորելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների ներկայությամբ մեկ առ մեկ հաշվարկում է անվավեր համարված քվեաթերթիկների, ինչպես նաև յուրաքանչյուր թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը, ամփոփում է քվեարկության արդյունքները և դրան համապատասխան կազմում արձանագրություն: Արձանագրության օրինակելի ձևը սահմանված է սույն կարգի Հավելված 6-ում:

6.14. Արձանագրությունը կազմելուց հետո յուրաքանչյուր թեկնածուի համար հաշվիչ հանձնաժողովի նախագահը ծրարում է քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկները, վավերացնում իր և հանձնաժողովի անդամների ստորագրությամբ և կցում արձանագրությանը:

6.15. Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած «կողմ» ձայների քանակի նվազման հաջորդականության:

6.16. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է գաղտնի քվեարկության արդյունքները գիտական խորհրդի նիստում՝ նշելով գիտական խորհրդի նիստին ներկա և քվեարկությանը մասնակցած անդամների թիվը, բաժանված, չբաժանված և քվեատուփում հայտնաբերված քվեաթերթիկների քանակը, շեշտում կողմ, դեմ, անվավեր արդյունքներն ու առաջարկում հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

6.17. Քվեարկության ընթացքի կամ քվեաթերթիկների հաշվարկի ընթացքի վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի՝ առարկություն ունեցող անդամը, քվեարկության արդյունքները ներկայացնելուց հետո կարող է գիտական խորհրդին ներկայացնել նախօրոք գրավոր շարադրած հատուկ կարծիք: Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ իր վերաբերմունքն է արտահայտում ներկայացված բոլոր հատուկ կարծիքների վերաբերյալ:

6.18. Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը և քվեարկության արդյունքները:

6.19. Քվեարկության արդյունքների հիման վրա գիտական խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) մրցույթը կայացած համարելու և դպրոցի տնօրեն ընտրվելու մասին,

բ) մրցույթը անվավեր ճանաչելու և դպրոցի տնօրեն չընտրվելու մասին,

գ) մրցույթը չկայացած ճանաչելու և դպրոցի տնօրեն չընտրվելու մասին:

6.20. Տնօրենի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է գիտական խորհրդի ցուցակային կազմի 50 (հիսուն) տոկոսից ավելի ձայներ:

6.21. Քվեարկության արդյունքում ընտրությունը համարվում է չկայացած, իսկ տնօրենը՝ չընտրված, եթե քվեարկված միակ թեկնածուն չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ ձայներ, կամ քվեարկության են դրվել երկու կամ ավելի թեկնածություններ, և նրանցից մեկը չի հավաքել գիտական խորհրդի ցուցակային կազմի 50 (հիսուն) տոկոսից ավելի ձայներ:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն կարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

7.2. Սույն կարգն ուժի մեջ է մտնում համալսարանի գիտական խորհրդում հաստատվելուց անմիջապես հետո:

7.3. Հավելվածները համարվում են սույն կարգի անբաժանելի մասը և գիտական խորհրդում հաստատվում են սույն կարգի հետ միասին:

7.4. Այն հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն կարգով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով և համալսարանի կանոնադրությամբ:

Գիտական քարտուղար ***Լ.Հ.Լևոնյան***

17 հոկտեմբերի 2025թ.
Արձանագրություն № 01-10/25

Հավելված 1

«___» «_____» 2025 թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը հայտարարում է մրցույթ համալսարանի ավագ դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի համար

Առաջնորդվելով «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, տնօրենի նշանակման կարգով (այսուհետ՝ Կարգ) հայտարվում է մրցույթ՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար: Կարգին կարող եք ծանոթանալ՝ www.nuaca.am կայքում:

1. Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

2) հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիրը).

3) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 21-րդ և 22-րդ մասերով սահմանված հիմքերի բացակայությունը:

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ գիտական խորհրդի նախագահի անունով (Կարգ՝ Հավելված 2).

2) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի՝ հավաստագրի պատճենը.

4) տվյալ ավագ դպրոցի զարգացման ծրագիրը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն (Կարգ՝ Հավելված 3).

6) Կարգի 3.8-րդ կետի ա) ենթակետով սահմանված 3 (երեք) հանդիպումների արձանագրությունները:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ, իսկ էլեկտրոնային եղանակով փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ բնօրինակները ներկայացնել մրցույթի օրը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի փաթեթները ներկայացնել 202 թվականի «_____» «___»-ից մինչև 202 թվականի «_____» «___»-ը ժամը՝ 10-ից 13-ը (աշխատանքային օրերին), ք. Երևան Տերյան 105, 2-րդ մասնաշենք (ձախ մուտք), № _____ սենյակ, հեռախոս՝ _____:

Մրցույթը տեղի կունենա 202 թվականի «_____» «___»-ին ժամը ___-ին, «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (ք. Երևան Տերյան 105, 2-րդ մասնաշենք (ձախ մուտք)) № _____ սենյակում:

Հավելված 2

«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
նախագահի պարոն Մ. Բարսեղյանին

3x4

լուսանկար

_____-ից
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

_____
դիմողի հաշվառման վայրը

_____
դիմողի հեռ. (աշխ., բնակ., բջջ.)

_____
անձնագրի կամ նույնականացման քարտի սերիան,
համարը, երբ և ում կողմից է տրվել

ծնված _____
օրը, ամիսը, տարին, վայրը

Դ Ի Մ Ո Ւ Մ

Ծանոթացել եմ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի կողմից հրապարակած համալսարանի ավագ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու մասին մրցույթի հայտարարությանը:

Իմ մասին հայտնում եմ.

Քաղաքացիությունը

_____
(Հայաստանի Հանրապետության, իսկ երկքաղաքացիության դեպքում՝ նշել կարգավիճակի ստացման ժամկետը և երկիրը)

Հայտնում եմ, որ «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 25-րդ և 27-րդ մասերով սահմանված սահմանափակումներ չունեմ:

Համակարգչային գրագիտություն

_____

_____
(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)

Նախազգուշացված եմ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____ _____20 թ.
ստորագրություն

Հավելված 3

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անունը, հայրանունը, ազգանունը
Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը
Ծննդյան վայրը, երկիրը
Հաշվառման բնակավայրը
Մշտական բնակավայրը
Քաղաքացիությունը
Այլ քաղաքացիություն, եթե կա
Ընտանեկան դրությունը (պարտադիր չէ պատասխանել)
Օտար լեզուների իմացությունը. բանավոր (նշել լեզուն և իմացության մակարդակը՝ վատ, բավարար կամ լավ)
Օտար լեզուների իմացությունը. գրավոր (նշել լեզուն և իմացությանմակարդակը՝ վատ, բավարար կամ լավ)
Ուսումնառությունը, կրթությունը. (թվել կրթօջախները, տարիները, մասնագիտությունը (մասնագիտությունները)
Աշխատանքային գործունեությունը.(թվել աշխատավայրը (աշխատավայրերը), տարիները, պաշտոնը (պաշտոնները)
Մասնագիտական ոլորտներում գործունեության փորձի նկարագիրը. (թվել հիմնարկը (հիմնարկները) կամ կազմակերպությունը (կազմակերպությունները), տարիները, մասնագիտությունը (մասնագիտությունները)
Վերապատրաստումները. (թվել տարիները, ծրագրերը, մասնակցության կարգավիճակը)
Այլ տեղեկություններ. (գիտական հոդվածներ, մենագրություններ, պետական, կառավարական և այլպարգևներ: Հնարավորության դեպքում նշել համացանցային հղումները)
Այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ եք համարում տրամադրել
Հեռախոսահամար
Էլեկտրոնային հասցե
Փոստային հասցե
Անհատական բլոգը կամ համացանցային էջը (առկայության դեպքում)

Հավելված 4

<u>Քվեաթերթ</u>

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամի դպրոցի տնօրենի ընտրության

Կողմ քվեարկելու դեպքում թեկնածուի ազգանվան դիմացի «կողմ եմ» բառի դիմաց առկա վանդակում նշվում է V-աձև նշան, իսկ դեմ քվեարկելու դեպքում նույն V-աձև նշանը նշվում է «դեմ եմ» բառի դիմաց առկա վանդակում: Այդ վանդակներում և քվեաթերթիկում այլ նշումներ չեն կատարվում:

հ/հ	Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը	Քվեարկություն	
		Կողմ եմ ☐	Դեմ եմ ☐

Հավելված 5

<u>Քվեաթերթ</u>

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի դպրոցի տնօրենի ընտրության

Կողմ քվեարկելու դեպքում քվեարկողը նախընտրած թեկնածուի ազգանվան դիմացի «կողմ եմ» բառի դիմաց առկա վանդակում նշում է V-աձև նշան: Քվեաթերթիկում այլ նշումներ չեն կատարվում:

h/h	Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը	Քվեարկություն
		Կողմ եմ ☐
		Կողմ եմ ☐
		Կողմ եմ ☐

Հավելված 6

Արձանագրություն №

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի դպրոցի տնօրենի ընտրության հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝

1.
2.
3.

Ամփոփելով 202 թվականի «_____» «____»-ին համալսարանի դպրոցի տնօրենի թեկնածուի գաղտնի քվեարկության արդյունքները արձանագրեց.

քվեարկությունը տեղի է ունեցել 202 թվականի «_____» «____»-ին, ժամը __-ից մինչև __-ը: Ընտրողների ցուցակում ընդգրկված են _____ ընտրող: Հանձնաժողովը, բացելով գաղտնի քվեարկության քվեատուփը, արձանագրեց.

1. գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար քվեաթերթիկներ են ստացել _____ ընտրող,
2. քվեարկությանը մասնակցել են _____ ընտրող,
3. քվեատուփում հայտնաբերվել է _____ քվեաթերթիկ,
4. անվավեր են ճանաչվել _____ քվեաթերթիկ,
5. ըստ քվեարկության արդյունքների՝ թեկնածուն ստացել է հետևյալ ձայները՝

1) ..... _____կողմ

2) ..... _____ դեմ

Այսպիսով՝ քվեարկության արդյունքում թեկնածուի օգտին քվեարկել է _____ ընտրող:

Քվեարկության արդյունքներով_____-ը

ազգանուն, անուն

ընտրված է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի դպրոցի տնօրեն:

Կամ՝

Քվեարկության արդյունքներով «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի դպրոցի տնօրենի ընտրությունը համարվում է չկայացած:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____

անդամներ՝ _____

_____

Հավելված 7

«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամի ռեկտոր պարոն
Մանուկ Բարսեղյանին

Դիմում

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը, ավագ դպրոցի գործունեության վերաբերյալ ինձ անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրելու՝ մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ առանձին հանդիպումներ կազմակերպելու նպատակով:

Դիմող՝ _____ _____2025 թ.

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ФОНД НАЦИОНАЛЬНЫЙ
УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И
СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

NATIONAL UNIVERSITY OF
ARCHITECTURE AND
CONSTRUCTION OF ARMENIA
FOUNDATION

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՔԱՂՎԱԾՔ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գիտական խորհրդի 2025թ. հոկտեմբերի 17-ի №01-10/25 նիստի արձանագրությունից

Լսեցին-«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2015 թվականի մարտի 23-ի N01-03/15 արձանագրությամբ հաստատված «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ընտրովի պաշտոնների ընտրության կարգում փոփոխություններ կատարելու մասին:

Որոշեցին՝

1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ընտրովի պաշտոնների ընտրության կարգի 2.1.-ին կետի 4-րդ ենթակետը, 2.2.-ը և 2.4.-ը կետերը ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2025 թվականի հոկտեմբերի 17-ից:

ՃՇՀԱՀ գիտական խորհրդի նախագահ
ռեկտոր, ֆ.մ.գ.դ. ***Մ.Գ. Բարսեղյան***

Գիտական քարտուղար
պ.գ.թ., դոցենտ ***Լ.Հ. Լևոնյան***